Լրատու Newsletter

ԳԷՈՐԳ ԹԱՀԹԱԵԱՆ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԱԶԳԱՅԻՆ ՎԱՐԺԱՐԱՆ

K TAHTA ARMENIAN COMMUNITY SUNDAY SCHOOL

Email: info@armenianschool.org.uk
armenianschool@hotmail.co.uk

Website: www.armenianschool.org.uk

Յուլիս 2023
Լրատու թիւ 27

Ողջոյնի Խօսք

Աւարտուեց 2022-2023 ուսումնական տարին: Ինչպէս անցած տարիները այս տարի նոյնպէս դպրոցի համար եղել է շատ հետաքրքիր և յիշարժան:

Այս տարի լրացաւ մեր սիրելի կրթօջախի 45-ամեակը:

Վարժարանը յաջողութիւնների է հասել ուուցչուհիների, հոգաբարձուների, կրթական և ծնողական յանձնախմբի անդամների, վարժարանի բարերարների համատեղ աշխատանքի շնորհիւ:

Վարժարանի կրթական յանձնախումբն անցկացրեց այս տարուայ աւարտական քննութիւնները: Աւարտական դասարանի աշակերտները յաջողութեամբ յանձնեցին հայոց լեզուի բանաւոր, գրաւոր և կարդալու քննութիւնները: Շնորհաւորում եմ մեր սիրելի շրջանաւարտներին, իրենց ծնողներին և ուուցչուհիներին, ովքեր տարիներ շարունակ հետևել են մեր երեխաների հայեցի կրթութեանն ու դաստիարակութեանը:

Մեր դպրոցի շրջանաւարտներին ցանկանում եմ, որպիսզի բոլորն իրենց արժանի տեղը գտնեն կեանքում: Մաղթում եմ ուժ ու եռանդ, նպատակների և իղձերի իրականացում և թող յաջողութիւնն ու երջանկութիւնը, լոյսն ու բերկրանքը միշտ ուղեկից լինեն իրենց:

Բարի ճանապարհ դէպի նոր կեանք, սիրելի շրջանաւարտներ:

Վարժարանի այս տարուայ ամավերջի հանդէսը նուիրուած էր Վարժարանի հիմնադրման 45 (1978 - 2023) ամեակին:

Օգտուելով առիթից Գ Թահթաեան Կիրակնօրեայ Ազգային վարժարանի կողմից խորին շնորհակալութիւն եմ յայտնում դպրոցի բոլոր բարերարներին, հոգաբարձուներին, կրթական և ծնողական յանձնախմբերի անդամներին, վարժարանի բարեկամներին::

Շնորհակալութիւն բոլոր ծնողներին, ովքեր գիտակցելով հայկական ինքնութեան համար՝ հայեցի կրթութեան անհրաժեշտութիւնը, իրենց հանգստի ժամերը զոհաբերում են, որպիսզի իրենց երեխաները անգլիական միջավայրում հայ մեծանան:

Շնորհակալութիւն մեր սիրելի ուսուցչուհիներին, ովքեր իրենց ուժն ու եռանդը չեն խնայում մեր երեխաների հայեցի կրթութեան և դաստիարակութեան համար: Ցանկանում եմ բոլորիդ ուրախ ամառային արձակուրդներ:

Ցանկանում եմ շնորհակալութիւն յայտնել այս ամսագրի պատասխանատուներին՝

տիկին Լենա Գիւլխանճեանին, տիկին Թամարա Մինասեանին, տիկին Մարիանա Հալաճ Ասմինեանին, տիկին Նուշիկ Պոհճալեանին:

Վերամուտ՝ սեպտեմբերի 10, 2023 թ

Ռ Թաթուլեան
Տնօրինուհի

ԱՆԻ

ՎԱՆ

ԿԱՐՍ

Անի «Կարմիր»

82 կէտ

Վան «Կապոյտ»

59 կէտ

Կարս «Նարնջագոյն»

61 կէտ

Այս տարուայ յաղթող խումբը Անին է գերագոյն թիւով կարմիր կէտեր հաւաքած ըլլալով:

Աշակերտական Գիտելիքներու Մրցոյթ

Մայիսի 7-ին տեղի ունեցաւ վարժարանի «Գիտելիքի մրցոյթը» չորրորդից իններորդ դասարանների աշակերտների մասնակցութեամբ: Նիւթը Հայկական լեռնաշխարհի և Հայոց պատմութեան կարևորագոյն իրադարձութիւնների մասին էր: Մեր աշակերտները ցուցադրեցին պահանջուած նիւթերի գիտելիքի բարձր մակարդակ: Այդ յաջողությունը մեր ուսուցչուհիների և աշակերտների բարեխիղճ և պարտաճանաչ աշխատանքի արդիւնքն էր: Շնորհաւորում ենք բոլորին:

On May 7, the school's "Knowledge Competition" took place with the participation of students from different classes - Year Four to Year Nine.
The subject was about the Armenian Highlands and the most important events in Armenian history. Our students demonstrated a high level of knowledge required for the subjects. That success was the result of conscientious and dutiful work of our teachers and students. We congratulate everyone.

Այցելութիւն

Մայիսի 14-ին Սրբազան Հայրը Սփիւռքի հարցերով Արցախի Հանրապետութեան նախագահի խորհրդական Տիկ Ազատուհի Սիմոնեանի հետ միասին այցելեցին Գ Թահթաեան Կիրակնօրեայ Ազգային վարժարան: Տիկ Սիմոնեանը առաւօտեան աղօթքից յետոյ ծնողներին, ուսուցչուհիներին և աշակերտներին ներկայացրեց շրջափակուած Արցախի Հանրապետութեան վիճակը և Արցախի Հանրապետութեան ժողովրդի պայքարը հանուն ազատութեան և իր պատմական հողի վրայ ապրելու աննկուն կամքն ու իրաւունքը: Այնուհետև նա այցելեց դասարանները ծանօթանալով վարժարանի կրթակյան ծրագրերի հետ: Տիկ Սիմոնեանը հանդիպեց վարժարանի հոգաբարձուների հետ, նրանք քննարկեցին որոշ հարցեր:

On May 14, His Holiness together with the adviser to the President of the Republic of Artsakh on Diaspora issues, Mrs. Azatuhi Simonian, visited K. Tahta Armenian Sunday School. After the morning prayer, Mrs. Simonian presented to the parents, teachers and students the situation of the besieged Republic of Artsakh and the struggle of the people of the Republic of Artsakh for freedom and the indomitable will and right to live on their historical land. Then she visited some classrooms and familiarised himself with the educational programs of the school. Ms. Simonyan met with the school's governors for a discussion.

Գիտելիքներու Մրցոյթ . Students' Quiz

Մարզական Օր – Sports' Day

Մայիսի 28-ին մեր դպրոցի տարեկան մարզական օրն էր:
Շատ հաճելի եւ խանդավառ մթնոլորտ մըն էր բոլոր աշակերտութեան ինչպէս նաեւ ծնողքներուն համար:
Ուսուցչական կազմի օժանդակութեամբ, գլխաւորութեամբ՝ սիրելի տիկին Այդային, շատ յաջող օր մըն էր ինչպէս ամէն տարի: Մարզահանդէսէն ետքը վայելեցինք Ծնողաց Յանձնախումբին աջակցութեամբ պատրաստուած խորովածը ինչպէս նաև համեղ անուշեղէնները:

On May 28, our very exciting Sport's Day took place at school. All the children participated in several age-appropriate activities as well as watched and cheered their classmates and teammates. The event was followed by a barbeque lunch which was enjoyed by all.
Special thanks go to Mrs Aida, for organising all the activities as always. We would also like to thank all the teachers, helpers, the governors and the Parents' Committee who made the day such a success.

Մարզական Օր – Sports' Day

Զբոսանք Բնության Գրկում – Day out in nature

Հունիսի 11-ին, 8-րդ դասարանի աշակերտներն ուսուցչուհի՝ Գայանե Հակոբյանի նախաձեռնությամբ եւ ծնողների օգնությամբ, կազմակերպել էին զբոսանք բնության գրկում:Աշակերտները տարբեր խաղեր խաղացին, ճաշակեցին տարբեր անուշեղեններ ու հայկական գաթա:Բոլորը մեծ բավականություն ստացած հեռացան: Year 8 students, their teacher and parents enjoyed a social day out together in the park.

Ամավերջի Հանդէս

Հունիսի 25-ին տեղի ունեցաւ մեր վարժարանի տարեվերջեան հանդէսը։ Այս տարւայ հանդէսը իւրայատուկ էր, քանի որ նուիրուած էր դպրոցի հիմնադրման 45-րդ ամեակին։

Հանդէսը բացեց Տնօրէնուհի Տիկին Ռուզաննա Թաթուլեանը։ Նա ողջոյնի խօսք յղեց ներկաներին և ամփոփեց 2022-2023 ուսումնական տարւայ ընթացքում տեղի ունեցած կարևոր ձեռքբերումներն ու իրադարձութիւնները։

Գեղարուեստական մասն սկսուեց վարժարանի հիմնադրման տեսարանով, որը ներկայացրեցին աւարտական դասարանի աշակերտները և վարժարանի նախկին շրջանաւարտները, որից յետոյ ելոյթ ունեցաւ միացեալ երգչախումբը՝ ներկայացնելով 3 երգ։

Ապա, իրենց պատրաստած համարներով, ելոյթ ունեցան վարժարանի բոլոր դասարանները՝ մանկապարտէզից մինչև 8-րդ դասարան։

Աշակերտներն արտասանեցին ոգեշունչ բանաստեղծութիւններ, ինչպէս նաև ներկայացրեցին գեղեցիկ պատկերներ՝ հայոց տառերի ստեղծման բեմականացումը և Յովհաննէս Թումանեանի << Սուտասանը>> հեքիաթը։

Հանդէսն առանձնայատուկ էր նաև նրանով, որ այն վարում էին վարժարանի նախկին սաներ Սևանա Բաբայեանը և Տիգրան Մինասեանը։

Հանդէսի վերջում տեղի ունեցաւ վարժարանի աւարտական դասարանի աշակերտների վկայականների յանձնումը։ Այս տարի ունեինք չորս շրջանաւարտ։

Վկայականների յանձնումից յետոյ բոլորը միասին երգեցին վարժարանի օրհներգը։

Հանդէսին ներկայ էին Բրիտանահայ համայնքի Ազգային Խորհրդի Ատենապետ Արմանդ Աբրահամեանը, համայնքի մի շարք կազմակերպութիւնների անդամներ, վարժարանի նախկին ուսուցիչներ, շրջանաւարտներ, այլ հիւրեր։

Ամավերջի Հանդէս – End of Year Performance

On June 25, the year-end event of our school took place. This year's event was special because it was dedicated to the 45th anniversary of the school's foundation.

The headteacher, Mrs. Ruzanna Tatulyan addressed the audience and summarised the important achievements and events of the 2022-2023 academic year.

The artistic part started with the scene of the establishment of the school, which was presented by the students of the graduating class and former graduates of the school, after which the choir performed 3 songs.

Then, all the classes of the school, from kindergarten to Year 8, performed. The students recited inspiring poems, as well as presented beautiful sketches: the staging of the creation of Armenian letters and the fairy tale "The Liar" by Hovhannes Toumanyan.

The Year 6 and Year 8 students performed a series of dances that were very impressive.

The event was also special in that it was conducted by former students of the school, Miss Sevana Babayan and Tigran Minasyan.

At the end, the graduating students had a short presentation and then received their certificates. This year we had four graduates.

Afterwards, everyone sang the school's anthem together.

Among the guests who attended was Mr Armand Abrahamian, Chairman of the National Council of the British Armenian Community, and a number of community members.

The graduates and their families, teachers and guests were treated to a small celebratory reception

Դաշտահանդէս – Summer Fair and BBQ

Յուլիսի 2-ին տեղի ունեցաւ մեր տարեկան դաշտահանդէսը, փակելով 2022-2023 դպրոցական տարեշրջանը:

Առտուայ պահերուն աշակերտները մասնակցեցան տարբեր կրթական աշխատանքներու եւ խաղերու, իսկ կէսօրին սկիզբ առաւ դաշտահանդէսին ճաշի եւ զուարճութեան բաժինը: Աշակերտները իրենց ընտանիքներուն եւ հիւրերուն հետ ճաշակեցին Ծնողաց Յանձնախումբին կողմէ պատրաստուած բազմատեսակ տնական խորտիկները, անպակաս ըլլալով անշուշտ խորովածը:

Ուսուցչական կազմը մեկնարկեց աշակերտներուն եւ հիւրերուն համար տարբեր զուարճալի զբաղմունքներ՝ վիճակախաղ, դիմայարդարի կրպակ, եւ այլն: Ինչպէս միշտ, մթնոլորտը ա՛լ աւելի ճոխացուց հայկական երաժշտութիւնը, որ հնչեց լման օրուայ ընթացքին՝ մեր ոչ-պաշտօնական DJ-ի՝ Պր Ստեփան Թաթուլեանին նախաձեռնութեամբ:

Այսպիսի բարձր ոգու եւ բարեկամական մթնոլորտի մէջ իրարու ցտեսութիւն ըսինք մինչեւ նոր ուսումնական տարուան սկիզբը՝ սեպտեմբերին:

Դպրոցէն ներս ունինք "Առաջարկներու Տուփ" մը եւ ձեզմէ կը խնդրենք որ ձեր առաջարկները, գաղափարներն ու տեսակէտները դպրոցի աշխատանքներու մասին՝ զետեղէք այդ տուփիկին մէջ:

Դաշտահանդէս – Summer Fair and BBQ

On July 2nd, the Parents' Committee organised the school's annual Summer Fair which marked the end of 2022-2023 academic year.
During the day, the students participated in various educational activities and games, and in the afternoon, the lunch and entertainment section of the event began. The students, together with their families and all the guests, enjoyed a variety of home-made pastries and cakes as well as the barbecue prepared by the Parents' Committee.

The teaching staff organised various games for both children and adults: tombola, chess, table tennis. The little ones were very enthusiastic about their games, especially "face painting".
As always, the atmosphere was made even more beautiful with Armenian music that was played during the day at the initiative of our non-official DJ, Mr. Stepan Tatoulian.
On such high spirit and friendly atmosphere, we said goodbye to each other until the beginning of the new school year in September.

Լոնդոնի Գ Թահթաեան Կիրակնօրեայ Ազգային Վարժարանի 45 ամեակը

Լոնդոնի Գ Թահթաեան Կիրակնօրեայ Ազգային Վարժարանը այս տարի՝ 2023 թուականին, տօնում է իր հիմնադրման 45 ամեայ յոբելեանը:

Վարժարանն հիմնադրուել է 1978 թւականին Բրիտանահայ Համայնքային և Եկեղեցական խորհրդի հովանաւորութեամբ և Գևորգ Թահթայի բարերարութեամբ:

Վարժարանն իր գործունէութեան 45 տարիների ընթացքում դարձել է կայացած կրթական հաստատութիւն, որտեղ սովորել են հայոց լեզու և հայեցի կրթութիւն են ստացել հարիւրաւոր բրիտանահայ երեխաներ:

Վարժարանն ունի 3 բաժիններ, որտեղ աշակերտները հաճախում են հետևեալ կարգով.

- մանկապարտէզ 3-ից 5 տարեկան.
- նախադպրոցական 5-ից 7 տարեկան.
- դպրոցական 7-ից 16 տարեկան.

Վարժարանում դասընթացները անցկացուում են արևմտահայերէն, արևելահայերէն դասական և հայաստանեան ուղղագրութեամբ:

Վարժարանն ունի իր կայացած կրթական ծրագիրը և աշակերտները 9-րդ դասարանն աւարտելիս յանձնում են աւարտական քննութիւն, որը համապատասխանում է անգլիական կրթական համակարգի GCSE-ի մակարդակին:

Ուսումնական ծրագրի մաս են կազմում յատուկ հանդիսութիւնները՝ նուիրուած մեր պատմական կարևոր դէպքերին. Սեպտեմբերի 21-ին, Թարգմանչաց տօնին, Վարդանանց հերոսամարտին, Հայոց Ցեղասպանութեան զոհերի յիշատակին: Վարժարանում նշում ենք նաև Կաղանդը, Մայրերի օրը, Զատիկը և ուսումնական տարին աւարտուում է աշակերտների մասնակցութեամբ հանդէսով:

Աշակերտների մասնակցութեամբ մեծ շուքով տօնել ենք Տիգրան Մեծի 2150 ամեակը, Անի մայրաքաղաքի 1050 ամեակը, Յովհաննէս Այվազովսկու 200 ամեակը, Գևորգ Բաշինջաղեանի 150 ամեակը, Յակոբ Պարոնեանի 174 ամեակը: Հայոց Ցեղասպանութեան զոհերի յիշատակի 100ամեայ տարելիցի առթիւ վարժարանը բրիտանահայ համայնքի համար բեմադրեց Գևորգ Թահթայի <<Այսպէս ապրեցանք>> գիրքը և <<Սասունցի Դաւիթ>> էպոսը: Հայաստանի Հանրապետութեան անկախութեան հռչակման 25 ամեակի առթիւ ամավերջին հանդէսին աշակերտները ներկայացրին Գևորգ Էմինի <<Հաւերժի Ճամփորդը>> ստեղծագործութիւնը:

Հայոց Ցեղասպանութեան զոհերի յիշատակի 103-ամեայ տարելիցի առթիւ բեմադրեցինք Պերճ Զեյթունցեանի << Ոտքի դատարանն է գալիս>> պիեսը:

Գ Թահթաեան Կիրակնօրեայ Ազգային վարժարանը միայն հայոց լեզու և հայկական մշակոյթ փոխանցող կառոյց չէ այլ մեր երեխաների սրտերում հայրենասիրութեան հունդեր սերմանող, հայ ինքնութեան և հայկական մթնոլորդ պահող սրբազան օջախ է:

Լոնդոնում հայ ազգային ինքնութեան պահպանման ու զարգացման, սերունդների հայեցի կրթութեան և դաստիարակութեան, հայապահպանական ծրագրերի իրականացման գործում նշանակալի աւանդի համար Վարժարանն 2010 և 2017 թւականներին արժանացել է ՀՀ Սփիւռքի նախարարութեան «Լաւագոյն հայկական կրթօջախ» մրցանակներին:

Քառասունհինգամեայ գործունէութեան ընթացքում վարժարանն իր անջնջելի հետքն է դրոշմել լոնդոնահայ համայնքի կեանքում:

Շնորհաւորում ենք Վարժարանի բոլոր աշակերտներին, ծնողներին, ուսուցչական կազմին, ծնողական յանձնախմբի անդամներին, հոգաբարձուներին, խնամակալներին, նուիրատուներին, Վարժարանի ներկայ և անցեալի բոլոր նուիրեալներին մեր սիրելի կրթօջախի հիմնադրման 45 ամեայ յոբելեանի առթիւ:

Եկե՛ք, բոլորս միասնաբար աշխատենք, սովորենք, պահենք և պահպանենք մեր լեզուն, մեր դարաւոր մշակոյթը, պատմութիւնը, կրոնը և մեր հայի ոգին:

2023 - 2024 Տարեշրջան

Առաջին Եռամսեակ 10 Սեպտ. 2023 – 10 Դեկտ. 2023 Term I 10 September 2023 – 10 December 2023	
10 Սեպտեմբեր 10 September	Վերամուտ Back to school
7 October	45th Anniversary Gala Dinner
15 Հոկտեմբեր 15 October	Մշակոյթի Օր - Թարգմանչաց Տօն Culture Day
22 Հոկտեմբեր 22 October	Արձակուրդ Half-Term Break
12 November	Open Day
19 Նոյեմբեր 19 November	Ծնողական Ընդհանուր Ժողով Parents' Meeting
10 Դեկտեմբեր 10 December	Նոր Տարուայ Հանդէս New Year's Celebration
Երկրորդ Եռամսեակ 7 Յունուար 2024 – 17 Մարտ 2024 Term II 7 January 2024 – 17 March 2024	
21 January	Open Day
3 Փետրուար 3 February	Ընդհանուր Գիտելիքներու Մրցում Quiz Night
4 Փետրուար 4 February	Վարդանանց Տօն St Vartan's Day
11 Փետրուար 11 February	Արձակուրդ Half-Term Break
25 February	Open Day
10 Մարտ 10 March	Մայրերու Օր Mothers' Day and Open Day
17 Մարտ 17 March	Զատկուայ Հանդէս Easter Celebration
Երրորդ Եռամսեակ 14 Ապրիլ 2024 –7 Յուլիս 2024 Term III 14 April 2024 – 7 July 2024	
28 April	Open Day
12 Մայիս 12 May	Աշակերտական գիտելիքներու մրցում Quiz for students
19 Մայիս 19 May	Մարզական Օր Sports' Day
9 June	Open Day
23 Յունիս 23 June	Դաշտահանդէս School BBQ
7 Յուլիս 7 July	Ամավերջի Հանդէս End of Year Assembly

Խմբագիրներ՝ Տիկ Թամարա Մինասեանեւ Տիկ Մարիանա Հալաճ Ասմինեան,, Տիկ Նուշիկ Պոհճալեան,
Խորհրդատու՝ Տիկ Ռուզաննա Թաթուլեան
Անգլերէն եւ Էջադրում՝ Տիկ Լենա Գիւլխանճեան